



ՀԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄ  
ՀԻՄՆԱԴՐԱՄ



ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱԿՈՐՄԱՆ  
ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ – ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՍՈՏ  
ՀԱՂՈՐԴԱԿՑԱՅԻՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ

ԱՌԱՐԿԱ՝ ԱՆԳԼԵՐԵՆ

ՀԵՂԻՆԱԿ՝ ԲԱՂԱՍԱՐՅԱՆ ԼԱՐԻՍԱ ՎԼԱԴԻՄԻՐԻ

ՄԱՐԶ՝ ԵՐԵՎԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Երևանի Գ. Զառուչի անվան 188 հիմնական դպրոց

# Բովանդակություն

Ներածություն	3
Գրականության ակնարկ	4
Գործնական համատեքստ	8
Ջետազոտության ընթացք	9
Տվյալների մշակում և վերլուծություն	12
Եզրակացություն	17
Գրականության ցանկ	18

## Ներածություն

21-րդ դարում կրթության բնագավառում օրեցօր աճում է բազմազանությունը, ուսուցման ծրագրերի ազատ ընտրությունը, հաղորդակցման նորարարական մոտեցումները, քանի որ արդի կրթության նպատակն է սովորողին գինել այնպիսի գիտելիքներով ու հմտություններով, որոնք կնպաստեն ոչ միայն նրա մասնագիտական, այլ նաև քաղաքացիական առաջընթացին:

Ժամանակակից մեթոդները ավելի շատ կենտրոնանում են հարցադրման, ցուցադրման, գործնական ու հաղորդակցական կարողությունների վրա: Ներկայումս, երբ ամբողջ աշխարհում մեծ է ժամանակակից տեխնոլոգիաների դերը, ուսումնական գործընթացում նկատում են, որ սովորողների մեջ աստիճանաբար մարում է հետաքրքրասիրությունը և ներգրավվածությունը դասապրոցեսին: Որպես 21-րդ դարի ուսուցիչ, փորձում են քայլել ժամանակին համընթաց, կիրառել այնպիսի նորարարական մեթոդներ, որոնք ավելի արդյունավետ կդարձնեն ուսումնառությունը:

Եվ իմ հետազոտական աշխատանքի նպատակն է յուրաքանչյուր սովորողի համար ստեղծել ու ձևավորել այնպիսի միջավայր, օգտագործել այնպիսի մեթոդներ, որոնք կձևավորեն, կզարգացնեն սովորողների ստեղծագործական ու քննադատական մտածողությունը, համագործակցելու, հաղորդակցվելու, դժվարությունները ինքնուրույն հաղթահարելու, իրենց կարծիքը ազատ արտահայտելու կարողությունները:

## Գրականության ակնարկ



Հաղորդակցումը իմաստը կազմելու, հաղորդելու և փոխանցելու երկկողմանի գործընթաց է: Այն կարող է իրականանալ անձանց կամ խմբերի միջև՝ օգտագործելով տարբեր միջոցներ՝ խոսքային կամ ոչ խոսքային: Հաղորդակցումը տեղի է ունենում, եթե կան իմաստը կամ հաղորդակցման միավորը, հաղորդողը և դրա ստացող(ները):

Հաղորդակցման առավել արդյունավետ ձևը երկխոսությունն է (դիալոգ), որի հիմքում ընկած է հարցեր տալու և լսելու ունակությունը: Չրույցի ընթացքը պայմանավորված է նաև հարցադրումների հաջողությամբ: Հիմնականում գոյություն ունեն երկու տիպի հարցեր՝ փակ և բաց: Բաց են այն հարցերը, որոնց պատասխանից կարող եք ստանալ զանազան տեղեկություններ, քանի որ գրուցակիցն ինքը կարող է ընտրել ինչ և ինչպես պատասխանել: Սովորաբար բաց հարցերի օգնությամբ կարողանում ենք հասկանալ գրուցակցի տեղեկացվածության աստիճանը, նրա տրամադրվածությունը, մտայնությունները, հուզական վիճակը: Այս բոլորը նա կարող է նկարագրել հարցերով, որոնք չեն ենթադրում այո կամ ոչ կամ որևէ կոնկրետ պատասխան: Ընդհակառակը, դրանք դրդում են մարդուն ազատ ձևակերպումներ տալ և արտահայտվել՝ չհետևելով որևէ կանոնի:

### Հարցադրումների մեթոդը

Հենց բաց հարցերի միջոցով կարող եք արդյունավետ շփման մեջ մտնել այլ մարդու հետ՝ նրա հետ հոգեբանական կապ հաստատելով և օգնելով, որ զրույցը ստեղծի ցանկալի մտերմության մթնոլորտ: Այս կարգի հարցեր առաջադրողը համարվում է հետաքրքիր,

անկեղծ և ուշադիր զրուցակից: Բաց հարցերն առավել արդյունավետ դարձնելու համար կարելի է օգտվել մարմնի լեզվի մի քանի հնարներից: Օրինակ՝ կարելի է մի փոքր թեքվել առաջ և բացել ձեռքի ափերը, ընդունել նախնական դիրքը և դադար տալ: Այս երկու ժեստերը՝ առաջ թեքվելը և ձեռքի ափերը բացելը ցույց են տալիս, որ դուք «բաց եք և բարյացակամ, իսկ դադարը հուշում է զրուցակցին, որ խոսելու հերթն իրենն է, և դուք սպասում եք: Այժմ հոգեբանորեն <Գնդակը նրա դաշտում է>, ուրեմն նա պետք է պատասխանի:

Բաց հարցերի օրինակներ են՝

- Ինչպիսի՞ն է ձեր կարծիքը... (What's your opinion...?)
- Ինչպե՞ս..., (How)
- Ի՞նչ եք դուք մտածում... What do you think...?
- Պատմեք, ինչդրեմ... (Tell me ,please)
- Ինչո՞ւ... (Why)
- Նկարագրեք... (Describe...)
- Բերեք օրինակ... (Give me an example...)

Եթե դուք նպատակ եք դրել ստանալ կոնկրետ տեղեկատվություն, ապա պետք չէ օգտվել «բաց հարցերից, քանի որ բաց հարցը պահանջում է բացատրություն, զրուցակցի տեսակետի շարադրանք, որը ենթադրում է զրույցի շարունակություն:

Փակ են կոչվում այն հարցերը, որոնք նախատեսում են կոնկրետ պատասխաններ՝ այն կամ ոչ, թվային կամ փաստացի տվյալներ՝ սահմանափակելով զրուցակցի՝ որևէ միտք ձևակերպելու ազատությունը: Փակ հարցերի չարաշահման դեպքում զրույցը սկսում է նմանվել հարցաքննության և վատ տպավորություն թողնում զրուցակիցների վրա՝ դրդելով նրանց արագ ավարտել զրույցը: Փակ հարցերի օրինակ են՝

- Ի՞նչ (What?)
- ո՞րտեղ (Where?)
- Ե՞րբ (When?)
- Ինչպե՞ս (How?)
- Նշեք ո՞րը (Specify which?)

և այլ նմանատիպ հարցեր: Փակ հարցերը նախատեսված են կոնկրետ, փաստացի, ոչ թե մանրամասն տեղեկություններ ստանալու, ինչպես նաև այլ կողմերի համաձայնությունը կամ անհամաձայնությունը հաստատելու համար: Բաց երկխոսության շարունակական ընթացքն ապահովելու համար կարելի է օգտագործել հայելային հարցեր, այսինքն՝ հարցերին պատասխանելիս օգտվել ձևակերպումներից և բառերից, որոնք օգտագործում է հարց տվողը: Հայելային հարցը զրուցակցի արտահայտած մտքի մի մասի կրկնությունն է՝ հարցական ինտոնացիայով, որի նպատակն է ստիպել զրուցակցին կողքից տեսնել իր սեփական կարծիքը, միտքը: Օգտվելով նույն բառապաշարից՝ դուք կարող եք հուշել նրան, որ դուք իր նման եք մտածում կամ զգում և ունեք ընդհանրություններ, ինչը ստեղծում է հոգեբանական կապ:

Ավելին, կարելի է ընդօրինակել գրուցակցի մարմնի դիրքը և նրա որոշ շարժումները, ինչը ենթագիտակցաբար ավելի կշեշտի ձեր նմանությունը:

Օրինակ՝ ես այլևս երբեք չեմ գնա այնտեղ:

Երբե՞ք:

Հայելային հարցերը տալիս են շատ ավելի լավ արդյունք, քան մշտական «ինչո՞ւ հարցերի տարափը, որն ընդհանրապես առաջացնում է պաշտպանական արձագանք, պատրվակների, պատճառների որոնում և կարող է հանգեցնել կոնֆլիկտների:

Առհասարակ հաղորդակցման հաջողությունը պայմանավորված է ոչ միայն խոսելու, այլև՝ լսելու ունակությամբ: Լսել կարելի է տարբեր ձևերով: Լսել չկարողանալը ոչ արդյունավետ հաղորդակցման հիմնական պատճառն է. հենց դա է բերում անհամաձայնության, սխալների և խնդիրների: Լսելը պահանջում է ջանքեր և որոշակի հմտություններ: Օրինակ՝ ձեր ասելիքը ձևակերպեք հստակորեն, ուշադրությամբ լսեք մարդկանց պատասխանները, որպեսզի նրանք իրենց հարգված և լսված զգան, օգտագործեք մարմնի լեզուն ուշադրությունը շեշտելու համար: Աղբյուրը՝ <Արդյունավետ գործարար հաղորդակցություն> ձեռնարկ: <ԵՄ-ն հանուն երիտասարդության՝ հմտություններ ապագայի համար> տարածաշրջանային ծրագրի շրջանակներում (2018-2020թթ.), Էջ 37-38

## **Բլումի տաքսոնոմիան և դրա կիրառումը**

Բլումի տաքսոնոմիան կոգնիտիվ/մտավոր ունակությունների և կրթական ձեռքբերումների հիերարխիկ դասակարգումն է:

Այն հիմնականում ներկայացվում է բուրգի տեսքով, ինչպես օրինակ՝ Մասլոուի մարդու պահանջմունքների հիերարխիան, քանի որ յուրաքանչյուր մակարդակ կախված է նախորդ մակարդակի ձեռքբերումից: Չնայած Բլումի տաքսոնոմիան ի սկզբանե նախատեսված է եղել աշակերտներին գնահատելու համար՝ այսօր այն լայնորեն կիրառվում է մի շարք նպատակներով: Այն օգնում է ուսուցիչներին սովորեցնելու, իսկ աշակերտներին՝ սովորելու գործընթացում:

Ուսուցիչը կարող է այս բուրգը կիրառել հետևյալ աշխատանքների կազմակերպման և ուսումնական նպատակների ապահովման համար՝

- Գնահատման իրականացում,
- Դասընթացների պլանավորում,
- Դասի բարդության գնահատում,
- Թեստերի/հանձնարարությունների բարդության գնահատում,
- Չափորոշիչների կիրառման ուղեցույցների մշակում,
- Առցանց դասընթացների մշակում,
- Սեփական ունակությունների գնահատում,
- Երեխաների՝ չափորոշիչներով նկարագրված ուսումնառական վերջնարդյունքների

ապահովում,


- և այլն:

Այս տաքսոնոմիան ստեղծվել է Բենջամին Բլումի կողմից 1956թ-ին՝ որպես ուսումնառական վերջանդունքների և նպատակների դասակարգման ձև: Մտավոր ունակությունների սկզբնական դասավորվածությունը հետևյալն էր՝ գիտելիք, վերարտադրում, կիրառություն, անալիզ, սինթեզ և գնահատում: Այնուհետև այս շրջանակը վերանայվեց և 2001թ-ին վերահրապարակվեց փոփոխված տարբերակը՝ հեղինակներ Լորին Անդերսոնի և Դավիթ Կրաթվուլի կողմից: Հիմնական փոփոխությունը հիերարխիայի ամենից կոմպլեքս՝ սինթեզի ունակությունը ստեղծելու ունակությամբ փոխարինելն էր:

Ամենից հաճախ մանկավարժները և կրթության ոլորտի ներկայացուցիչները Բլումի տաքսոնոմիայի օգնությամբ կարողանում են օբյեկտիվորեն գնահատել՝ որքանով են իրենք արդյունավետ իրականացրել ուսումնական գործընթացը: Այս գործիքը նաև թույլ է տալիս դյուրին դարձնել անհատականացված ուսուցումը, իրականացնել ամփոփիչ և ձևավորող գնահատում, պլանավորել նախագծային ուսուցում և այլն:

Եկեք տեսնենք, թե ինչպես է Բլումը իր տաքսոնոմիայի միջոցով դասակարգել երեխաների մտավոր ունակություններն՝ ըստ հաջորդականության՝

<https://www.imdproc.am/info/usucichnerin/blooms-taxonomy>



<https://herearmenia.files.wordpress.com/2011/06/bloom-2.jpg>

Ի վերջո, կարելու է, որ մենք, որպես ուսուցիչ, օգնում ենք մեր սովորողներին նախապես քննադատական մտածողներ: Գիտելիքի վրա հիմնված եւ երեխաներին օգնելը սկսում է կիրառել, վերլուծել, եւ գնահատել այն բանալին, որը օգնում է նրանց աճել եւ բարգավաճել դպրոցում:

## **Գործնական համատեքստ**

Սույն հետազոտական աշխատանքը ես կատարել եմ Երևան քաղաքի Գևորգ Չաուշի անվան N 188 հիմնական դպրոցում, որտեղ աշխատում եմ երկար տարիներ որպես անգլերեն լեզվի ուսուցիչ: Անգլերեն լեզուն համարվում է միջազգային լեզու, ուստի աշակերտների մեծամասնությունը ձգտում է լավ տիրապետել լեզվին: Սակայն շատ է նաև պասիվ աշակերտների թիվը: Ժամանակակից մեթոդների և հնարների շնորհիվ կարողացա երեխաների մեջ առաջացնել հետաքրքրություն և սեր առարկայի հանդեպ: Փորձարարական դասերս անցկացրել եմ 6-րդ, 9-րդ և 7-րդ դասարաններում, արդյունքը գոհացուցիչ էր: Որպես 21-րդ դարի ուսուցիչ ես փորձում եմ քայլել ժամանակին համահունչ և էլ ավելի բարձրացնել աշակերտներիս ներգրավվածությունն ու հետաքրքրությունը:



# ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՋՔ

## ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍԻ ՊԼԱՆ 1

### ՀԱԿԵԼԿԱԾ 1

<https://padlet.com/lilit12032005/26p1aoyju1v2u19p>


The image shows a Padlet board with a purple background. The title is "Փորձարարական դաս 'Գլան' 1" (Experimental lesson 'Glan' 1). The board contains several cards with Armenian text and illustrations:

- Պատճառ-եզրույթային միջոց 3 բովանակում**: Գլանը միջուկային բնույթի է: Արմատներն ածխածնաջրածին պարունակող սննդամթերքի կամ ածխածնի և ջրից կազմված է: Գլանը բնութագրվում է իր արմատներով և ստորին ծայրամասով: Արմատներն ածխածնի և ջրից կազմված են: Արմատներն ածխածնի և ջրից կազմված են: Արմատներն ածխածնի և ջրից կազմված են:
- Պատճառ-եզրույթային միջոց 2 բովանակում**: Գլանը բնութագրվում է իր արմատներով և ստորին ծայրամասով: Արմատներն ածխածնի և ջրից կազմված են: Արմատներն ածխածնի և ջրից կազմված են: Արմատներն ածխածնի և ջրից կազմված են:
- Պատճառ-եզրույթային միջոց 1 բովանակում**: Գլանը բնութագրվում է իր արմատներով և ստորին ծայրամասով: Արմատներն ածխածնի և ջրից կազմված են: Արմատներն ածխածնի և ջրից կազմված են: Արմատներն ածխածնի և ջրից կազմված են:
- Տեսքի կազմակերպում 1**: Գլանը բնութագրվում է իր արմատներով և ստորին ծայրամասով: Արմատներն ածխածնի և ջրից կազմված են: Արմատներն ածխածնի և ջրից կազմված են: Արմատներն ածխածնի և ջրից կազմված են:
- Տեսքի կազմակերպում 2**: Գլանը բնութագրվում է իր արմատներով և ստորին ծայրամասով: Արմատներն ածխածնի և ջրից կազմված են: Արմատներն ածխածնի և ջրից կազմված են: Արմատներն ածխածնի և ջրից կազմված են:
- Տեսքի կազմակերպում 3**: Գլանը բնութագրվում է իր արմատներով և ստորին ծայրամասով: Արմատներն ածխածնի և ջրից կազմված են: Արմատներն ածխածնի և ջրից կազմված են: Արմատներն ածխածնի և ջրից կազմված են:
- Տեսքի կազմակերպում 4**: Գլանը բնութագրվում է իր արմատներով և ստորին ծայրամասով: Արմատներն ածխածնի և ջրից կազմված են: Արմատներն ածխածնի և ջրից կազմված են: Արմատներն ածխածնի և ջրից կազմված են:
- Տեսքի կազմակերպում 5**: Գլանը բնութագրվում է իր արմատներով և ստորին ծայրամասով: Արմատներն ածխածնի և ջրից կազմված են: Արմատներն ածխածնի և ջրից կազմված են: Արմատներն ածխածնի և ջրից կազմված են:

# ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍԻ ՊԼԱՆ 2

## ՀԱԿԵԼՎԱՅ 2

<https://docs.google.com/document/d/1OzoYJLMvGvifa8buEvXD3hRXOTWExhCE/edit>



# ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍԻ ՊԼԱՆ 3

## ՀԱՎԵԼԿԱՅ 3

<https://padlet.com/lilit12032005/ztgxcdzxvqurb52p>

The image shows a Padlet board with a green background. The title at the top is "Փորձարարական դաս Պլան" (Experimental Class Plan). The board is organized into seven columns, each with a title and content:

- 1. Դասի նպատակներ** (Class Objectives):
  - Ուսանողները կարողանան ներկայացնել իրենց փորձերը:
  - Իր փորձերը փորձելով, որովհետև և շահունակ նպատակներ ձևակերպել:
  - Ցուցանել իրենց և այլ սխալները:
- 2. Դասի ընթացքը նկարագրությունը 25 րոպե** (Class Process Description 25 minutes):
  - Դասի նպատակը և որոշակի փորձեր:
  - Դասի նպատակը և որոշակի փորձեր:
  - Դասի նպատակը և որոշակի փորձեր:
- 3. Անգլերեն** (English):
  - Անգլերեն բառերի նկարագրությունը:
  - Անգլերեն բառերի նկարագրությունը:
  - Անգլերեն բառերի նկարագրությունը:
- 4. Գիտելիքի մաս** (Knowledge):
  - Գիտելիքի մաս:
  - Գիտելիքի մաս:
  - Գիտելիքի մաս:
- Վայրի և ընտանի կենդանիներ (Wild and domestic animals)**:
  - Վայրի կենդանիներ:
  - Ընտանի կենդանիներ:
  - Վայրի կենդանիներ:
- Դասընթացի և մտխոյացնող խոսքեր 10 րոպե** (Lesson and confusing speech 10 minutes):
  - Դասընթացի և մտխոյացնող խոսքեր:
  - Դասընթացի և մտխոյացնող խոսքեր:
  - Դասընթացի և մտխոյացնող խոսքեր:
- 3. Եզրահանգում 5-7 րոպե** (Conclusion 5-7 minutes):
  - Եզրահանգում 5-7 րոպե:
  - Եզրահանգում 5-7 րոպե:
  - Եզրահանգում 5-7 րոպե:

## Փորձարարական դաս 1



### Առարկա՝ Անգլերեն

### Դասարան՝ 7-րդ

### Թեմա՝ Clothes

Դասի սկզբում առաջադրվեց դասի նպատակներն ու խնդիրները: Այս դասարանում կան աշակերտներ, ովքեր դժվար են ներգրավվում դասին: Եվ իմ նպատակն էր նաև սրանց մոտիվացնելը և դասին ներգրավելը: Այնուհետև ստուգվեց տնային առաջադրանքի կատարման ճշտությունը և ըմբռնումը, ստուգման միջոցով բացահայտվեցին բացթողումները: Նոր դասին անցումը սկսեցի հետևյալ տողերով՝ հարցադրումը մարդկային մտքի և միջանձնային հաղորդակցության հիմնական ձևն է:




Օգտագործելով ֆլեշքարտեր՝ սովորողների ուշադրությունը կենտրոնացրեցի բաց և փակ հարցերի ճիշտ կիրառմանը: <<Quizizz>> հայտորոշիչ թեստի միջոցով ստուգվեց երեխաների բառապաշարը <<Հագուստ>> թեմայի վերաբերյալ:

Նոր դասի բառապաշարի հարստացման համար կիրառեցի հիշողությունը և ուշադրությունը ստուգող մեթոդ, որի արդյունքում, ի զարմանս ինձ, ակտիվ մասնակցություն ունեցան բոլոր աշակերտները: Տեքստը ներկայացնելուց հետո դասի **ընկալման փուլում** փորձեցի աշակերտների ուշադրությունը կենտրոնացնել ճիշտ հնչերանգով կարդալու և

հարցադրումներ կազմելու տեխնիկան զարգացնելու ուղղությամբ: Իսկ դասի **խթանման փուլում** հարցադրումների միջոցով երեխաներին մոտիվացրեցի երկխոսության: Աշակերտները աշխատեցին զույգերով: Դասի **կշռադատման փուլում** կիրառվեց անդրադարձ, ամփոփում (wh-հարցերի ճիշտ կիրառում) և փոխադարձ գնահատում:

## Փորձարարական դաս 2



**Առարկա՝ Անգլերեն**

**Դասարան՝ 9-րդ**

**Թեմա՝ This is Canada**

**Մեթոդներ՝** Համագործակցային աշխատանք -1.Հետազոտական՝

ճանապարհորդություն (Travelling) դեպի Կանադա

2.Հարց/պատասխան (*using Wh-questions*)

3. ցուցադրում, դիտում

Դասն իրականացրել եմ 9-րդ դասարանում, որտեղ կան տարբեր մակարդակի սովորողներ, և այնպիսի աշակերտներ ուլքեր կարող են սովորել, բայց 9-րդ դասարանում արդեն ծուլանում են: Դասը սկսեցի ներկայացնելով դասի նպատակները: Աշակերտներին տրվեց հայտորոշիչ թեստ Quizizz ծրագրի միջոցով “How well do you know Canada” (աշակերտները աշխատեցին մեծ ոգևորությամբ): Բացատրեցի **համագործակցային մեթոդը**, որից հետո աշակերտների հետ

հետազոտական ճամփորդություն կատարեցինք դեպի Կանադա՝ դիտելով տեսանյութը: Այնուհետև ներկայացվեց երկխոսություն՝ հիմնվելով հարցադրումների մեթոդի վրա (**Wh-questions**):



Աշակերտները խմբային աշխատանքով ներկայացրեցին սահիկահանդեսը: Յուրաքանչյուր թեման ներկայացնելուց հետո տրվում էին ամրապնդող հարցեր թեմայի վերաբերյալ (**When?,Who?Why?What?**) հարցական դերանունների կիրառմամբ: Դասի վերջում կատարվեց անդրադարձ խաչբառի միջոցով: Դասը հազեցած էր ժամանակակից մեթոդներով, որից աշակերտները շատ ոգևորվեցին: Իսկ իմ ոգևորությունը այնքան մեծ էր, որ ես կարողացա ապահովել աշակերտների ներգրավվածությունը դասին (բացառությամբ 1-2 աշակերտի), փոխկապվածություն,հարգալից վերաբերմունք ընկերոջ տեսակետի վերաբերյալ և սեր առարկայի նկատմամբ:

## Փորձարարական դաս 3



### Առարկա՝ Անգլերեն Դասարան՝ 6-րդ

### Թեմա՝ Wild and domestic animals

Այս փորձարարական դասը իրականացրեցի 6-րդ դասարանում: Իմ նպատակն էր նորարարական մեթոդների կիրառմամբ օգնել աշակերտներին հեշտ յուրացնել նոր բառապաշարը, զարգացնել ընկալողական, արտասանական հմտությունները, կարողանալ օգտագործել թեմայի բառապաշարը քննարկման մեջ: Դասն սկսվեց նախորդ կյուրթի ֆրոնտալ հարցումով:



**What happened when...?**

**Why? Because..**

**What's the word for?**

## **Right or Wrong**

Բաց և փակ հարցադրումների մեթոդի միջոցով ստուգվեցին նախորդ դասից ստացած գիտելիքները: Դասարանը նախապես բաժանված էր խմբերի: Նոր նյութի խթանման, ընկալման և կշռադատման փուլերում անհրաժեշտ է ակտիվացնել երեխաների ճանաչողական գործունեությունը, բարձրացնել նոր նյութի ընկալման և կշռադատման արդյունավետությունը: Եվ այս ամենը հաշվի հառնելով նոր նյութի հաղորդումից առաջ կազմակերպվեց էքսկուրսիա դեպի կենդանաբանական այգի: Տեսասահիկների ցուցադրությամբ ներկայացվեցին վայրի և ընտանի կենդանիները: Հետո կատարվեց խմբային-քարտային աշխատանք, հետո զույգային աշխատանք, աշակերտները խոսեցին թեմայի շուրջ՝ կիրառելով դասի ընթացքում ձեռք բերած հմտություններն ու բառապաշարը: Մեծ ոգևորությամբ խաղացին մոտիվացնող խաղերը, որոնք կիրառվեցին առաջին անգամ:

Վերջում կատարվեց ստացած գիտելիքների ամրապնդում բաց և փակ հարցադրումների մեթոդով և խմբային աշխատանքի գնահատում ըստ Բլումի Տաքսոնոմիայի:

Դասը մեծ հետաքրքրություն առաջացրեց աշակերտների մեջ, և նրանք խոստացան այսուհետ ավելի լավ սովորել:



# Եզրակացություն

Այս հետազոտական աշխատանքը, որը հագեցած էր նորարարական մեթոդներով և հնարներով, խթանեց իմ հմտությունների զարգացմանը: 21-րդ դարի ուսուցիչը պետք է լինի ստեղծագործ և նորարար, քանի որ ժամանակակից տեխնոլոգիաները փոխվում են արագ տեմպերով: Սույն հետազոտական աշխատանքը ևս մեկ անգամ ապացուցեց, որ ուսուցիչը պետք է կարողանա համագործակցել և լավ աշխատել թիմի կազմում: Ելնելով իմ փորձարարական դասերից՝ ես հասկացա, որ ուսուցիչը իր հնարամիտ և ստեղծագործ մեթոդներով պետք է օգնի իր աշակերտներին նավարկելու տեղեկատվության և գիտելիքի անձայրածիր օվկիանոսում: Պետք է աշակերտներին սովորեցնել առողջ դատել, ճշմարտությանը հասնել սեփական փորձով և գիտելիքներով: Ես շատ ուրախացա և ոգևորվեցի՝ տեսնելով աշակերտներիս խանդավառությունը, ներգրավվածությունը, մոտիվացիան և դասի նկատմամբ հետաքրքրությունը: Եվ ես մեծ ուրախությամբ կարող եմ ասել, որ այս հետազոտական աշխատանքով և փորձարարական դասերով կարողացա յուրաքանչյուր սովորողի համար ստեղծել ու ձևավորել այնպիսի միջավայր, օգտագործել այնպիսի մեթոդներ, որոնք ձևավորեցին, զարգացրեցին սովորողների ստեղծագործական ու քննադատական մտածողությունը, համագործակցելու, հաղորդակցվելու, դժվարությունները ինքնուրույն հաղթահարելու, իրենց կարծիքը ազատ արտահայտելու կարողությունները: Կարողացա դասերին ներգրավել նույնիսկ պասիվ աշակերտների և տեսնել նրանց փայլող աչքերը:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

<Արդյունավետ գործարար հաղորդակցություն> ձեռնարկ: <ԵՄ-ն հանուն երիտասարդության՝ հմտություններ ապագայի համար> տարածաշրջանային ծրագրի շրջանակներում (2018-2020թթ.)

[Հարցադրումների մեթոդ](#)

<https://www.imdproc.am/info/usucichnerin/blooms-taxonomy>

<https://herearmenia.files.wordpress.com/2011/06/bloom-2.jpg>

<https://elearning.iedf.am/mod/page/view.php?id=30468>

<https://www.youtube.com/watch?v=cBTXYtU9qfY&t=136s>